ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

***Հոդվածի հղումը.*** Մկրտչյան Ա. (2024), ՀՀ արտահանման ընդլայնման հնարավորությունները ԵԱՏՄ շրջանակում, *Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ*, 1(4), 128-150, DOI: 10.52174/29538114_2024.1-128
***Ներկայացվել է խմբագրություն՝*** 11.04.2024 թ.
***Ուղարկվել է գրախոսության՝*** 15.04.2024 թ.
***Երաշխավորվել է հրապարակման՝*** 02.07.2024 թ.

**ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ**
*ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
https://orcid.org/0000-0001-5578-2730

# ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

*Արտահանման խթանմանն ուղղված քայլեր ձեռնարկելը ցանկացած պետության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է: Արտահանման ծավալների աճը, նոր շուկաների ձեռքբերումը հնարավորություն են տալիս երկրներին, ի լրումն ներքին շուկայի սահմանափակ պահանջարկի, ստանալու արտաքին շուկայի գրեթե անսահմանափակ պահանջարկ, ինչը հատկապես կարևորվում է փոքր տնտեսություն ունեցող երկրների դեպքում: ՀՀ-ն, անդամակցելով ԵԱՏՄ-ին, ձեռք է բերել որոշակի հնարավորություններ՝ խթանելու արտահանումը դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ: Հոդվածում վերլուծվել է ՀՀ արտաքին առևտուրը՝ բացահայտելու այն հիմնական ապրանքախմբերը, որոնց գծով ՀՀ-ն ունի միջազգային մասնագիտացման մակարդակ: ԵԱՏՄ շրջանակում ՀՀ արտահանման ընդլայնման հնարավորությունները բացահայտելու նպատակով անհրաժեշտ է հաշվարկել նաև ԵԱՏՄ անդամ մյուս երկրների արտահանման միջազգային մասնագիտացման ցուցանիշները, հատկապես այն ապրանքախմբերի համար, որոնց առումով ՀՀ-ն ունի միջազգային մասնագիտացման մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս տեսնելու, թե ԵԱՏՄ անդամ երկրներից որոնք են հանդիսանում ՀՀ մրցակից երկրներ՝ տվյալ ապրանքախմբերի արտահանման մասով: Հոդվածում հաշվարկվել են նաև ԵԱՏՄ անդամ երկրների վերոնշյալ ապրանքախմբերի ներմուծման կառուցվածքում ՀՀ և ԵԱՏՄ մյուս երկրների (բացի ՀՀ-ից) տեսակարար կշիռները, ինչի արդյունքում կարելի է դիտարկել ՀՀ արտահանման ընդլայնման հնարավորությունները ԵԱՏՄ համատեքստում:*

**Հիմնաբառեր.** *ՀՀ, ԵԱՏՄ, արտահանման ընդլայնման հնարավորություններ, արտահանման մասնագիտացում, Միջազգային առևտրի ստանդարտ*

*դասակարգում (ՄԱՍԴ), արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ), միջազգային առևտուր*

JEL: F01, F13
DOI: 10.52174/29538114_2024.1-128

**Ներածություն:** Ցանկացած երկրի համար երկարաժամկետ կայուն տնտեսական աճ ապահովելը տնտեսության զարգացման հիմնական առաջնահերթությունն է: Անկախ տնտեսության չափերից՝ երկարաժամկետ կայուն տնտեսական աճն անհնար է ապահովել միայն ներքին սահմանափակ պահանջարկով: Իսկ եթե դիտարկենք փոքր տնտեսություն ունեցող զարգացող երկրներին, ինչպիսին ՀՀ-ն է, ապա գործնականում գրեթե անհնար է փոքր ներքին սահմանափակ պահանջարկով մտածել երկարաժամկետ կայուն տնտեսական աճի մասին: Հետևաբար՝ արտահանման խթանումը դիտվում է որպես կայուն տնտեսական աճ ապահովելու կարևորագույն միջոց: Այս համատեքստում շատ կարևոր քայլ է մասնակցությունն ինտեգրման գործընթացներին, ինչի արդյունքում հնարավորություն է տրվում տվյալ խմբավորման անդամ երկրների հետ արտոնյալ պայմաններով առևտրային հարաբերություններ ունենալու: ՀՀ-ն, անդամակցելով ԵԱՏՄ-ին, հնարավորություն է ստացել ավելի սերտ առևտրային հարաբերություններ հաստատելու ԵԱՏՄ անդամ երկրների հետ: Ուստի բավականին արդիական է վերլուծել և բացահայտել արտահանման այն հնարավորությունները, որն ունի ՀՀ-ն՝ անդամակցելով ԵԱՏՄ-ին:

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել ՀՀ արտահանման մրցակցային առավելությունները՝ բացահայտելով դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ ՀՀ արտահանման ընդլայնման հնարավորությունները:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել այն ապրանքախմբերը, որոնց գծով ՀՀ-ն ունի միջազգային մասնագիտացման մակարդակ,
- բացահայտել, թե արդյոք ԵԱՏՄ անդամ մյուս երկրներն ունեն միջազգային մասնագիտացման մակարդակ այն ապրանքախմբերի գծով, որոնց հետ կապված, ՀՀ-ն ունի միջազգային մասնագիտացման մակարդակ,
- հաշվարկել ԵԱՏՄ անդամ երկրների վերոնշյալ ապրանքախմբերի ներմուծման կառուցվածքում ՀՀ տեսակարար կշիռը,
- հաշվարկել ԵԱՏՄ անդամ երկրների վերոնշյալ ապրանքախմբերի ներմուծման կառուցվածքում ԵԱՏՄ մյուս երկրների (բացի ՀՀ-ից) տեսակարար կշիռները:

**Գրականության ակնարկ:** ԵԱՏՄ, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ առևտրի զարգացման հնարավորություններին ու հեռանկարներին իրենց հետազոտություններում անդրադարձել են ինչպես հայ հետազոտողներ, այնպես էլ արտասահմանցի՝ հիմնականում ռուս հետազոտողներ:

Նախ անդրադառնանք այն հետազոտություններին, որոնք իրականացվել են նախքան ԵԱՏՄ ձևավորումը՝ ներկայացնելով հետազոտողների գնահատականները ԵԱՏՄ ստեղծման վերաբերյալ:

Ա. Թավադյանը 2014 թ. իրականացրած վերլուծության արդյունքում նշում է, որ ՀՀ՝ ԵԱՏՄ-ին ինտեգրումն ունի մի շարք կառուցվածքային առավելություններ, որոնք կամրացնեն ՀՀ տնտեսական դիրքերը և կմեծացնեն կայուն զարգացման հնարավորությունները: Թե որքանով հնարավոր կլինի իրացնել այս ներուժը, կապված է արտահանման և էներգետիկայի ոլորտում առանցքային հիմնախնդիրների լուծման, ներդրումային գրավչության բարձրացման հետ[1]:

Ըստ Ա. Թավադյանի՝ ԵԱՏՄ-ին ՀՀ ինտեգրումը երկրի տնտեսական զարգացման առավել նախընտրելի սցենարն է: ԵԱՏՄ-ին ՀՀ ինտեգրումն ունի մի շարք առավելություններ, որոնց ներուժը հնարավորություն կտա ամրապնդելու ՀՀ տնտեսական դիրքերը և բարձրացնելու զարգացման կայունությունը[2]:

Ըստ Ն. Զիյադուլաևի՝ ՀՀ-ն ԵԱՏՄ-ին անդամակցելը ընկալում է որպես ազգային շահերը պաշտպանելու իր հնարավորությունների և երկրի անվտանգության ամրապնդում, ինչպես նաև հաջող տնտեսական զարգացման երաշխիք, իր արտադրանքի համար առկա և նոր շուկաների ընդլայնում ու կանխատեսելի գործընկերների հետ համագործակցության փոխշահավետ ոլորտների զարգացում: Իհարկե, ԵԱՏՄ-ի համար սա տնտեսապես աննշան ձեռքբերում է (ևս 3 միլիոն բնակչության ավելացում 170 միլիոնանոց ընդհանուր շուկայում, հիմնադիր երկրների ընդհանուր ՀՆԱ-ին 2,5 տրիլիոն ԱՄՆ դոլարին «ընդամենը» 10–12 միլիարդ դոլարի ԱՄՆ ավելացում), բայց ՌԴ-ի և ԵԱՏՄ հիմնադիր մյուս երկրների համար աշխարհաքաղաքական գործոնը կարևոր է: ԵԱՏՄ-ի ընդլայնումը, նույնիսկ փոքր երկրները ծանր տնտեսական պայմաններով ընդգրկելով, փաստ է, որն առնվազն վկայում է ԵԱՏՄ գրավչության մասին[3]:

Այսուհետ քննարկենք այն հետազոտությունները, որոնք իրականացվել են արդեն ԵԱՏՄ ստեղծումից հետո՝ հիմնված տվյալ պահի դրությամբ առկա փաստական տվյալների վրա:

Վ. Աբրամովն ու Լ. Ժիգունն իրենց «ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտրի հեռանկարների գնահատում՝ օգտագործելով սցենարային մոտեցում» հոդվածում նշում են, որ ԵԱՏՄ անդամ երկրները կենտրոնացած չեն լիամասշտաբ տնտեսական ինտեգրման, այլ հետամուտ են լինում օգտագործելու իրենց արտահանման առավելությունները ԵԱՏՄ անդամ երկրների հետ միայն երկկողմ, իսկ շատ հազվադեպ՝ եռակողմ համագործակցության շրջանակներում, որտեղ անվիճելի գերակա դիրք ունի ՌԴ-ն[4]:

Վերոնշյալ հոդվածում հեղինակները, իրականացնելով սցենարային վերլուծություն, ՀՀ-ի վերաբերյալ արձանագրել են հետևյալ արդյունքները.

---

[1] Տե՛ս **Թավադյան Ա.,** Ինտեգրացիոն գործընթացների իրական հնարավորությունները, «21-րդ ԴԱՐ», թիվ 5 (57), հուլիս, 2014, էջ 23-24:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 24:

[3] Տե՛ս **Зиядуллаев Н. С.,** ЕАЭС: между политикой и экономикой, «Проблемы теории и практики управления», № 11, 2014, էջ 32:

[4] Տե՛ս **Леонидович А. В., Александрович Ж. Л.,** Оценка перспектив взаимной торговли стран ЕАЭС с использованием сценарного подхода, Журнал «Современная наука: актуальные проблемы теории и практики», Серия: Экономика и Право, №4, апрель, 2020, էջ 8:

1. Եթե ՀՀ-ն շարունակի պահպանել արտահանման գերակայության իր քաղաքականությունը, ապա 2017 թ. ցուցանիշների համեմատությամբ ՀՀ արտահանման 10%-ի ավելացումը էական ազդեցություն կունենա միայն ՌԴ-ի հետ առևտրի վրա՝ ավելացնելով ՀՀ-ից դեպի ՌԴ ներմուծումը 0,36%-ով, իսկ ՀՀ արտահանման գերակայության պարագայում դրա ազդեցությունը ԵԱՏՄ փոխադարձ առևտրի վրա կկազմի ընդամենը 0,097%[5]:

2. ԵԱՏՄ փոխադարձ առևտրի վրա ամենամեծ ազդեցությունն առաջանում է ՌԴ արտահանման գերակայության պարագայում՝ կազմելով 8,23%, որի հետևանքով ՀՀ-ն կունենա 9,76% ներմուծման աճ[6]:

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի 2020 թվականի «Armenia's precarious balance: The European Union (EU) and The Eurasian Economic Union (EAEU)» զեկույցում նշվում է, որ ՀՀ-ն հսկայական ներուժ և իրական հնարավորություններ ունի դառնալու կամուրջ 2 միությունների՝ ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի միջև, քանի որ ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ-ն ունի ամենամոտ իրավական հիմքերը ԵՄ-ի հետ, ժողովրդավարության և շուկայական տնտեսության տեսանկյունից ՀՀ-ն մոտ է ԵՄ երկրներին, մյուս կողմից՝ ՀՀ-ն զարգացնում է գործընկերային հարաբերությունները ԵԱՏՄ-ի հետ[7]:

Վերոնշյալ հանգամանքներից բացի, ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի միջև ՀՀ-ի՝ կամուրջ դառնալուն կարող է նպաստել նաև հայկական սփյուռքը. ՀՀ-ի սահմաններից դուրս ամենամեծ թվով հայեր ապրում են ՌԴ-ում, իսկ ԵՄ երկրներում նույնպես կան հայկական մեծ համայնքներ[8]:

Լ. Սարգսյանը, ուսումնասիրելով մինչև 2017 թ. ՀՀ արտահանման ցուցանիշները և հաշվարկելով ՀՀ արտահանման համեմատական առավելությունները, եկել է այն եզրահանգման, որ նույնիսկ այն ապրանքների համեմատական առավելությունները, որոնք ունեցել է ՀՀ-ն մինչև ԵԱՏՄ-ին անդամակցելը, ամբողջությամբ չեն օգտագործվում ԵԱՏՄ անդամ երկրների հետ առևտրային հարաբերություններում ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո: Բացի այդ, անդամակցության առաջին 2 տարիների ընթացքում ՀՀ-ն ձեռք է բերել արտահանման համեմատական առավելություններ մի քանի ապրանքախմբերի դեպքում, սակայն նույնիսկ այդ ապրանքախմբերի արտահանման համեմատական առավելությունները ամբողջությամբ չեն օգտագործվել: Ամփոփելով իր հետազոտությունը՝ Լ. Սարգսյանը, փորձելով պատասխանել այն հարցին, թե արդյոք տնտեսական տեսանկյունից ՀՀ-ի համար արդյունավետ է եղել ԵԱՏՄ-ին միանալու որոշումը, հանգում է այն եզրակացության, որ արտահանման ընդլայնման տեսանկյունից ՀՀ-ն չի ստացել այն առավելությունները, որոնք նախապես կանխատեսվել էին[9]:

Ըստ Գ. Գևորգյանի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ցուցանիշների վերլուծությունը բացահայտում է նաև այն իրողությունը, որ

---

[5] Տե՛ս նույն տեղը, էջ 8:

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 9:

[7] Տե՛ս Konrad Adenauer Stiftung (KAS) report, 2020, «Armenia's precarious balance: The European Union (EU) and The Eurasian Economic Union (EAEU)», էջ 75-76:

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 75:

[9] Տե՛ս **Саргсян Л. Н.,** Экспорт Армении и возможности его расширения в рамках ЕАЭС, Міжнародний науковий журнал «Інтернаука». Серія: «Економічні науки», № 10 (18)/2018, Київ, 2018, էջ 80:

երկրի ընտրած տնտեսական ինտեգրման վեկտորն առայժմ ամբողջությամբ չի բավարարում տնտեսության օբյեկտիվ պահանջմունքները և տնտեսական աճին չի նպաստում այն չափով, որ չափով նախատեսվում էր վերպետական կառույցին անդամակցության ժամանակ: Համեմատաբար թույլ կողմերի շարքին կարելի է դասել արտաքին առևտրի կառուցվածքում տարածաշրջանի երկրների փոքր ներկայացվածությունը, մասնավորապես՝ հարևան Իրանի Իսլամական Հանրապետության հետ արտահանման և ներմուծման չափազանց փոքր տեսակարար կշիռը, այն դեպքում, երբ տարածաշրջանային ինտեգրումը կարող է դիտարկվել որպես վերպետական միավորին անդամակցության արդյունք՝ տնտեսական ինքնիշխանության նվազմանը հակակշռելու հնարավորություն[10]:

Վ. Հայրապետյանը, վերլուծելով ԵԱՏՄ ինտեգրման միավորման մեջ փոքր կշիռ ունեցող երկրների (Բելառուս, Ղազախստան և Ղրղզստան) դերը ՀՀ արտաքին առևտրում, նշում է, որ կան մի քանի ապրանքախմբեր, որոնք իրենց կայուն կշիռն ունեն դեպի Բելառուս, Ղազախստան և Ղրղզստան ՀՀ արտահանման կառուցվածքում, մասնավորապես՝ ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ, դեղագործական ապրանքներ, կարի և կաշվի արտադրություն, ինչպես նաև թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր ու մետաղներ: Հեղինակը նշում է նաև, որ բացի վերոհիշյալ ապրանքախմբերից, գոյություն ունեն այլ ապրանքախմբեր ևս (շինարարական նյութեր, գյուղատնտեսական արտադրանք, ապակու արտադրություն և այլն), որոնք եվրասիական շուկայում քիչ են ներկայացված, սակայն կարող են դիտարկվել դեպի ԵԱՏՄ երկրներ ՀՀ արտահանման ընդլայնման հնարավորություն[11]:

Համաձայն Ռ. Գրինբերգի և Ա. Պուլինի համատեղ հետազոտության՝ 2015–2019 թթ. արդյունքներով ԵԱՏՄ անդամակցությունից ամենամեծ օգուտն ունեցել է ՀՀ-ն, որի ներտարածաշրջանային արտահանումն աճել է 2,3 անգամ: Այդ ժամանակահատվածում դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ ՀՀ արտահանումն աճել է 1,3 մլրդ ԱՄՆ դոլարով, որը կազմել է ՀՆԱ 9,7%-ը: ՀՀ-ի համար նման նշանակալի աճը հիմնականում պայմանավորված է դեպի ՌԴ արտահանվող ապրանքախմբերի բավականին լայն տեսականիով[12]: Բացի այդ, հեղինակների հաշվարկները ցույց են տվել, որ 2015-2019 թթ. ընթացքում ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ առևտրի ծավալները 2010-2014 թթ. համեմատությամբ նվազել են 32,1 մլրդ ԱՄՆ դոլարով կամ 10,8%-ով. նվազում է արձանագրվել ԵԱՏՄ անդամ բոլոր երկրների դեպքում, բացառությամբ ՀՀ-ի՝ աճելով ավելի քան 96%-ով[13]:

Լ. Սարգսյանը, ուսումնասիրելով ԵԱՏՄ անդամ յուրաքանչյուր երկրի ներտարածաշրջանային արտահանման ընդլայնման հնարավորությունները, եկել է այն եզրահանգման, որ ԵԱՏՄ բոլոր անդամ երկրները, մինչև ԵԱՏՄ

---

[10] Տե՛ս **Գևորգյան Գ.,** ՀՀ տնտեսական ինքնիշխանության հիմնահարցերը՝ արտաքին տնտեսական հարաբերությունների համապատկերում, «Բանբեր ՀՊՏՀ», 3, 2022, էջ 127:

[11] Տե՛ս **Айрапетян В. Л.,** Роль «малых» участников ЕАЭС во внешней торговле Армении, Научный результат. Экономические исследования. Т. 3, №4, 2017, էջ 8:

[12] Տե՛ս **Гринберг Р. С., Пылин А. Г.,** Евразийский экономический союз. Основные тренды развития на фоне глобальной неопределенности, «Экономика региона», Т. 16, вып. 2, 2020, էջ 343:

[13] Տե՛ս նույն տեղը, էջ 344:

անդամակցությունն ունենալով արտահանման համեմատական առավելություններ մի քանի ապրանքախմբերում, ԵԱՏՄ անդամակցությունից հետո ձեռք են բերել արտահանման համեմատական առավելություններ մի քանի ապրանքախմբերի համար ևս, մասնավորապես՝ ՀՀ-ն 3 ապրանքախմբերի համար, Բելառուսը՝ 2, Ղազախստանը, Ղրղզստանը և ՌԴ-ն՝ 1-ական ապրանքախմբերի համար[14]: ՀՀ-ի համար ԵԱՏՄ անդամակցությունից հետո արտահանման համեմատական առավելություններ ձեռք բերած ապրանքախմբերը, ըստ հեղինակի, հետևյալն են.

1. Հանքային արտադրանք (ԱՏԳ ԱԱ երկնիշ դասակարգմամբ 25 և 26 խմբերը):

2. Մանածագործական նյութեր և մանածագործական արտադրատեսակներ (ԱՏԳ ԱԱ երկնիշ դասակարգմամբ 50–63 խմբերը):

3. Օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, չափիչ, հսկիչ, ճշգրիտ, բժիշկական կամ վիրաբուժական գործիքներ և ապարատներ. Ցանկացած տեսակի ժամացույցներ. Երաժշտական գործիքներ. դրանց մասերը և պարագաները, Տարբեր արդյունաբերական ապրանքներ, Արվեստի գործեր, հավաքածու կազմելու առարկաներ և հնաոճ իրեր (ԱՏԳ ԱԱ երկնիշ դասակարգմամբ 90–99 խմբերը)[15]:

Ա. Մարգարովն ու Վ. Դավթյանը, ուսումնասիրելով ՀՀ ինտեգրման ռիսկերն ու հնարավորությունները ԵԱՏՄ էլեկտրաէներգիայի միասնական շուկայի ստեղծման պարագայում, եկել են այն եզրահանգման, որ ԵԱՏՄ էլեկտրաէներգիայի միասնական շուկայի ձևավորումը կարող է ինտեգրման հնարավորություններ ստեղծել ՀՀ-ի համար, քանի որ ՀՀ-ն ի վիճակի է վերամշակել բնական գազի հավելյալ ծավալներ և էլեկտրաէներգիա մատակարարել «Հյուսիս-Հարավ» էլեկտրաէներգետիկ միջանցքով՝ մուտք գործելով ԵԱՏՄ շուկաներ: Ակնհայտ է, որ, հաշվի առնելով միության անդամ երկրների արտադրական կառուցվածքում բնական գազով աշխատող էլեկտրակայանների մեծ տեսակարար կշիռը, էլեկտրաէներգիայի միասնական շուկա կարող է գործարկվել միայն գազի միասնական շուկայի ձևավորումից հետո[16]:

Համաձայն ԵԱՏՄ անդամ երկրների համակարգային նշանակություն ունեցող արդյունաբերական ձեռնարկությունների՝ ԵԱՏՄ անդամ երկրներ հասանելիության վերաբերյալ հետազոտության՝ ձեռնարկությունների ավելի քան 70%-ը լիովին կամ չնչին սահմանափակումներով հասանելի են համարում Հայաստանի և Ղրղզստանի շուկաները, 80%-ը այդպիսին գնահատել են Բելառուսի և Ղազախստանի շուկաները, իսկ 90%-ը՝ ՌԴ շուկան[17]:

---

[14] Տե՛ս **Саргсян Л. Н.,** Возможности расширения внутрирегионального экспорта для каждой страны ЕАЭС, Международный центр научного сотрудничества «Наука и просвещение», «Экономика, бизнес и право в новых условиях», сборник статей Международной научно-практической конференции. Пенза, 2019, էջ 51:

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 49-50:

[16] Տե՛ս **Маркаров А. А., Давтян В. С.,** Интеграция Армении в общий электроэнергетический рынок ЕАЭС: риски и возможности, «Геоэкономика энергетики», № 2 (14), 2021, էջ 133:

[17] Տե՛ս **Abramov V. L., Ogloblina E V., Abanina I. N., Lapenkova N. V.,** Assessment of Integration Effects in Mutual Trade of the EAEU Countries, Proceedings of the External Challenges and Risks for Russia in the Context of the World Community's Transition to Polycentrism: Economics, Finance and Business (ICEFB 2019), «Advances in Economics», Business and Management Research, volume 107, էջ 126:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է ընդգծել, որ ՀՀ-ն դեռ ամբողջությամբ չի իրացրել այն հնարավորությունները, որ ստացել է՝ անդամակցելով ԵԱՏՄ-ին:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Վերլուծությունն իրականացնելու նպատակով հաշվարկվել են ԵԱՏՄ անդամ երկրների արտադրության միջազգային մասնագիտացման ցուցանիշներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու այն ապրանքախմբերը, որոնց արտահանման գծով երկիրն ունի մասնագիտացման բարձր մակարդակ և արտահանման համեմատական առավելություններ: Մասնավորապես՝ հաշվարկվել են ներճյուղային մասնագիտացման գործակիցը (Մգ) և արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցը (ԱՄՀԳ)[18]:

Ներճյուղային մասնագիտացման գործակիցը (Մգ) տվյալ ճյուղի արտահանման և ներմուծման ծավալների տարբերության հարաբերությունն է տվյալ ճյուղի արտահանման և ներմուծման ծավալների գումարին.

$$Մ_գ = \frac{Ա - Ն}{Ա + Ն} \times 100\%:$$

Գործակիցը տատանվում է [-100,100] միջակայքում: -100-ի դեպքում երկիրը տվյալ ապրանքախմբի բացարձակ ներմուծողն է, իսկ +100-ի դեպքում՝ բացարձակ արտահանողը: Երկիրն ունի տվյալ ապրանքախմբի գծով միջազգային մասնագիտացման մակարդակ, եթե գործակիցը դրական է, այսինքն՝ տատանվում է (0,100] միջակայքում, ընդ որում՝ ինչքան գործակիցը մոտ է +100-ին, այնքան բարձր է տվյալ ապրանքախմբի գծով միջազգային մասնագիտացման մակարդակը:

Արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցը (ԱՄՀԳ) տվյալ երկրի արտահանման ծավալի մեջ տվյալ երկրի տվյալ ճյուղի արտահանման ծավալի տեսակարար կշռի հարաբերությունն է համաշխարհային արտահանման ծավալի մեջ բոլոր երկրների տվյալ ճյուղի արտահանման ծավալների տեսակարար կշռին:

$$ԱՄՀԳ = \frac{Ա_Ե}{Ա_Հ},$$

որտեղ՝

$Ա_Ե$-ն տվյալ երկրի տվյալ ճյուղի արտահանման ծավալի տեսակարար կշիռն է տվյալ երկրի արտահանման ծավալի մեջ,

$Ա_Հ$-ն՝ բոլոր երկրների տվյալ ճյուղի արտահանման ծավալների տեսակարար կշիռը համաշխարհային արտահանման ծավալի մեջ:

Գործակիցը միշտ ընդունում է դրական արժեք, սակայն որպեսզի երկիրն ունենա տվյալ ապրանքախմբի գծով միջազգային մասնագիտացման մակարդակ, նշված գործակիցը պետք է մեծ լինի 1-ից, ընդ որում՝ որքան գործակիցն ավելի է մեծ 1-ից, այնքան բարձր է տվյալ ապրանքախմբի գծով միջազգային մասնագիտացման մակարդակը:

Այս 2 գործակիցները հաշվարկելուց հետո ցանկացած երկրի դեպքում հնարավոր է արձանագրել հետևյալ արդյունքները.

[18] Տե՛ս Միջազգային տնտեսագիտություն, ուսումն. ձեռնարկ /Դ. Գալոյանի և Զ. Թադևոսյանի խմբ./, Եր., 2018, էջ 50:

1. Մգ > 0, իսկ ԱՄՀԳ > 1 – այս դեպքում տվյալ երկիրը տվյալ ապրանքախմբի գծով, անկասկած, ունի միջազգային մասնագիտացման մակարդակ:
2. Մգ < 0, իսկ ԱՄՀԳ < 1 – այս դեպքում տվյալ երկիրը տվյալ ապրանքախմբի գծով, անկասկած, չունի միջազգային մասնագիտացման մակարդակ:
3. Մգ > 0, իսկ ԱՄՀԳ < 1 – այս դեպքում պատկերն այդքան էլ միանշանակ չէ, քանի որ Մգ դրական լինելը վկայում է, որ տվյալ երկիրը տվյալ ապրանքախմբից ավելի շատ արտահանում է, քան ներմուծում, բայց համաշխարհային մակարդակով տվյալ ապրանքախմբի արտահանման ծավալներն այնքան չեն, որպեսզի ցուցանիշի իմաստով էական կշիռ ունենան համաշխարհային շուկայում, քանի որ ԱՄՀԳ-ն փոքր է 1-ից:
4. Մգ < 0, իսկ ԱՄՀԳ > 1 – այս դեպքում, չնայած տվյալ երկիրն ավելի քիչ արտահանում է, քան ներմուծում (Մգ՝ բացասական), սակայն այդ արտահանման ծավալները բավական են, որպեսզի տվյալ ապրանքախմբի գծով տվյալ երկիրը, ցուցանիշի իմաստով, ունենա էական կշիռ համաշխարհային շուկայում, քանի որ ԱՄՀԳ-ն մեծ է 1-ից:

Հետազոտության ժամանակ չեն դիտարկվել 2-րդ և 3-րդ դեպքերը, քանի որ 2-րդ դեպքում երկիրը տվյալ ապրանքախմբի գծով միանշանակ չունի միջազգային մասնագիտացման մակարդակ, իսկ 3-րդ դեպքում համաշխարհային մակարդակով տվյալ ապրանքախմբի արտահանման ծավալներն այնքան չեն, որ, ցուցանիշի իմաստով, էական կշիռ ունենան համաշխարհային շուկայում:

Հետազոտության համար հետաքրքրություն էին ներկայացնում այն ապրանքախմբերը, որոնց գծով երկիրը միանշանակ ունի միջազգային մասնագիտացման մակարդակ կամ տվյալ ապրանքախմբի արտահանման ծավալներն համաշխարհային շուկայում, ցուցանիշի իմաստով, էական են:

Հետազոտության համար օգտագործվել են ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ապրանքների արտաքին առևտրի վերաբերյալ ներկայացվող տվյալներն ըստ երկրների[19]:

**Վերլուծություն:** Հիմք ընդունելով ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ապրանքների արտաքին առևտրի վերաբերյալ ներկայացվող տվյալներն ըստ երկրների՝ ՀՀ-ի համար հաշվարկվել են ներճյուղային մասնագիտացման ու արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցները՝ ըստ «Միջազգային առևտրի ստանդարտ դասակարգման» (SITC) եռանիշ դասակարգչի (այսուհետ՝ Դասակարգիչ) ապրանքախմբերի: Հաշվարկներից պարզ է դառնում, որ ԱՄՀԳ-ն ՀՀ-ից արտահանվող 39 ապրանքախմբի համար 2022 թ. տվյալներով գերազանցում է 1 արժեքը (աղյուսակ 1):

[19] Տե՛ս https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

*Աղյուսակ 1*

***ՀՀ-ից արտահանվող ապրանքախմբեր, որոնց ԱՄՀԳ > 1 (2015–2022 թթ.)[20]***

| ՄԱՍԴ (SITC) 3-նիշ | Ապրանքախմբի անվանում | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **283** | Պղնձի հանքաքարեր և խտանյութեր, պղնձե փայլատներ, ցեմենտային պղինձ | 79.25 | 81.63 | 85.04 | 74.61 | 86.98 | 83.36 | 70.65 | 55.42 |
| **122** | Պատրաստի ծխախոտ (ծխախոտի փոխարինիչներով կամ առանց դրանց) | 62.70 | 54.27 | 55.50 | 51.87 | 47.52 | 43.58 | 42.92 | 48.70 |
| **671** | Թուջ, հայելային թուջ, սպունգանման երկաթ, երկաթի կամ պողպատի հատիկներ և փոշիներ, ֆեռոհամաձուլվածքներ | 25.29 | 21.76 | 21.12 | 30.72 | 30.35 | 18.95 | 24.76 | 24.34 |
| **289** | Թանկարժեք մետաղների հանքաքարեր և խտանյութեր, թանկարժեք մետաղների թափոններ, ջարդոն և քերծվածքներ (բացի ոսկուց) | 26.10 | 19.80 | 6.19 | 8.10 | 34.61 | 9.68 | 3.34 | 22.20 |
| **287** | Հիմնական մետաղների հանքաքարեր և խտանյութեր՝ այլտեղ չդասակարգված | 7.61 | 2.55 | 4.91 | 5.57 | 5.33 | 23.23 | 23.77 | 20.49 |
| **277** | Բնական հղկանյութեր՝ այլտեղ չդասակարգված (ներառյալ արդյունաբերական ադամանդները) | 2.18 | 1.69 | 2.41 | 1.41 | 0.36 | 7.63 | 23.35 | 17.52 |
| **112** | Ալկոհոլային խմիչքներ | 15.11 | 17.86 | 21.21 | 18.39 | 20.62 | 16.94 | 18.18 | 15.19 |
| **667** | Մարգարիտներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր՝ մշակված և չմշակված | 5.24 | 5.62 | 4.74 | 4.38 | 3.72 | 5.42 | 5.14 | 10.21 |
| **58** | Մրգեր, պահածոներ և մրգերից պատրաստված ապրանքներ (բացառությամբ մրգային հյութի) | 4.40 | 3.72 | 3.63 | 3.58 | 2.98 | 2.86 | 3.31 | 5.15 |

[20] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ապրանքների արտաքին առևտրի վերաբերյալ ներկայացվող տվյալներն ըստ երկրների, https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

*Աղյուսակ 1-ի շարունակություն*

| ՄԱՍԴ (SITC) 3-նիշ | Ապրանքախմբի անվանում | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **841** | Տղամարդկանց հագուստ տեքստիլ գործվածքներից, բացառությամբ տրիկոտաժից և հյուսած գործվածքից (բացի 845.2 ենթախմբի մեջ ներառվածներից) | 5.40 | 6.13 | 6.83 | 8.91 | 5.83 | 5.15 | 6.32 | 5.15 |
| **34** | Ձուկ՝ թարմ (կենդանի կամ ոչ կենդանի), պաղեցված կամ սառեցված | 1.88 | 1.25 | 1.98 | 2.35 | 2.52 | 4.68 | 5.08 | 4.91 |
| **001** | Կենդանի կենդանիներ, բացառությամբ 03 բաժնում ընդգրկված կենդանիների | 2.07 | 0.92 | 2.26 | 0.71 | 1.97 | 4.03 | 6.84 | 4.47 |
| **842** | Կանանց հագուստ տեքստիլ գործվածքներից, բացառությամբ տրիկոտաժից և հյուսած գործվածքից (բացի 845.2 ենթախմբի մեջ ներառվածներից) | 3.65 | 3.39 | 4.04 | 6.27 | 5.40 | 5.57 | 5.88 | 4.12 |
| **023** | Կարագ և կաթից ստացված այլ ճարպեր և յուղեր | 0.11 | 0.01 | 0.06 | 0.14 | 0.32 | 0.15 | 0.36 | 3.51 |
| **897** | Ոսկերչական իրեր, ոսկյա և արծաթյա իրեր և թանկարժեք կամ կիսաթանկարժեք նյութերից այլ իրեր՝ այլտեղ չդասակարգված | 1.26 | 3.50 | 1.33 | 1.88 | 1.72 | 1.73 | 3.55 | 3.45 |
| **054** | Բանջարեղեն՝ թարմ, պաղեցրած, սառեցված կամ նորմալ պահածոյացված (ներառյալ չորացրած հատիկները), արմատներ, պալարներ և այլ ուտելի բանջարեղեն՝ թարմ կամ չորացրած | 2.01 | 2.95 | 1.93 | 3.07 | 3.30 | 3.08 | 4.38 | 3.37 |
| **111** | Ոչ ալկոհոլային խմիչքներ՝ այլտեղ չդասակարգված | 4.04 | 3.56 | 3.34 | 2.86 | 2.81 | 2.87 | 3.82 | 3.06 |
| **684** | Ալյումին | 7.34 | 5.33 | 5.35 | 3.95 | 3.67 | 4.44 | 4.08 | 3.06 |
| **971** | Ոսկի, ոչ դրամական (բացառությամբ ոսկու հանքաքարերի և խտանյութերի) | 3.32 | 3.24 | 3.27 | 4.26 | 4.72 | 3.65 | 1.94 | 2.92 |
| **351** | Էլեկտրաէներգիա | 19.08 | 12.36 | 12.61 | 11.63 | 7.99 | 8.96 | 4.00 | 2.72 |

*Աղյուսակ 1-ի շարունակություն*

| ՄԱՍԴ (SITC) 3-նիշ | Ապրանքախմբի անվանում | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **073** | Շոկոլադ և կակաո պարունակող այլ պարենային ապրանքներ՝ այլ դասերում չդասակարգված | 0.60 | 0.93 | 2.72 | 3.90 | 3.75 | 2.51 | 2.76 | 2.64 |
| **056** | Բանջարեղեն, արմատներ և պալարներ՝ պատրաստված կամ պահածոյացված՝ այլտեղ չդասակարգված | 1.99 | 1.82 | 2.25 | 2.40 | 2.03 | 2.76 | 3.55 | 2.61 |
| **665** | Շղարշ, ժանյակ, ասեղնագործություն, ժապավեններ, զարդարանքներ և այլ մանր իրեր | 2.76 | 1.97 | 2.46 | 3.12 | 2.13 | 2.69 | 2.82 | 2.51 |
| **761** | Մոնիտորներ և պրոյեկտորներ, որոնք չեն ներառում հեռուստատեսային ազդանշանի ընդունիչներ. հեռուստատեսային ազդանշանների ընդունիչներ, ներառյալ՝ ռադիո, ձայնային կամ տեսագրման կամ նվագարկման սարքավորում | 0.03 | 0.01 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.01 | 0.00 | 2.39 |
| **685** | Կապար | 0.02 | 0.16 | 0.10 | 0.05 | 0.08 | 0.00 | 1.60 | 2.10 |
| **057** | Մրգեր և ընկույզներ (բացի յուղային ընկույզներից), թարմ կամ չորացրած | 1.25 | 2.31 | 1.02 | 1.60 | 1.60 | 2.61 | 2.65 | 1.98 |
| **846** | Հագուստի պարագաներ՝ պատրաստված տեքստիլ գործվածքներից՝ տրիկոտաժե կամ ոչ տրիկոտաժե (բացառությամբ երեխաների համար նախատեսված իրերի) | 0.37 | 1.19 | 2.13 | 2.87 | 2.87 | 2.78 | 3.80 | 1.87 |
| **071** | Սուրճ և սուրճի փոխարինիչներ | 1.43 | 0.88 | 0.74 | 0.85 | 0.77 | 0.84 | 0.86 | 1.56 |
| **091** | Մարգարին և համակցված ճարպեր | 0.03 | 0.00 | 0.01 | 0.02 | 0.01 | 0.03 | 0.00 | 1.47 |
| **024** | Պանիր և կաթնաշոռ | 8.01 | 3.63 | 2.78 | 1.82 | 1.28 | 1.91 | 2.46 | 1.46 |
| **212** | Մորթի՝ չհագած (ներառյալ գլուխները, պոչերը, թաթերը և այլ կտորներ, որոնք հարմար են մորթյա արտադրանք պատրաստելու համար), բացառությամբ 211-րդ խմբի մորթու և կաշվե հումքի | 1.51 | 2.58 | 0.01 | 1.69 | 0.20 | 0.00 | 0.13 | 1.46 |

*Աղյուսակ 1-ի շարունակություն*

| ՄԱՍԴ (SITC) 3-նիշ | Ապրանքախմբի անվանում | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **059** | Մրգային հյութեր (ներառյալ՝ խաղողահյութը) և բանջարեղենային հյութեր՝ չխմորված և ալկոհոլային հավելումներ չպարունակող, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր պարունակող կամ չպարունակող | 1.66 | 0.96 | 1.00 | 1.14 | 0.98 | 1.25 | 2.28 | 1.40 |
| **633** | Խցանից պատրաստված արտադրանք | 0.01 | 0.01 | 0.37 | 0.20 | 0.22 | 0.01 | 0.08 | 1.37 |
| **845** | Հագուստի արտադրատեսակներ՝ պատրաստված մանածագործական գործվածքներից՝ տրիկոտաժե, հյուսած կամ չմշակված՝ այլտեղ չդասակարգված | 0.39 | 0.73 | 1.19 | 1.74 | 1.04 | 1.06 | 1.49 | 1.31 |
| **292** | Բուսական ծագման հումք՝ այլտեղ չդասակարգված | 1.24 | 1.31 | 1.77 | 1.38 | 1.02 | 0.95 | 0.89 | 1.18 |
| **583** | Պլաստմասսայե միաթել՝ 1 մմ-ից ավելի լայնական հատվածքով, ինչպես նաև ձողերի, ձողերի և ձևավորված պրոֆիլների տեսքով՝ մշակված կամ չմշակված մակերեսով՝ այլ մշակում չանցած | 1.31 | 1.28 | 1.40 | 1.61 | 1.33 | 1.40 | 1.35 | 1.17 |
| **672** | Ձուլակտորներ և երկաթի կամ պողպատի այլ առաջնային ձևեր. թուջից կամ պողպատից պատրաստված կիսաֆաբրիկատներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.49 | 1.18 | 1.17 |
| **278** | Այլ չմշակված հանքային նյութեր | 1.54 | 2.11 | 2.09 | 2.18 | 3.08 | 2.42 | 2.20 | 1.16 |
| **629** | Ռետինե արտադրանքներ՝ այլտեղ չդասակարգված | 0.02 | 0.03 | 0.10 | 0.21 | 0.21 | 0.47 | 0.66 | 1.15 |

Աղյուսակ 1-ից կարող ենք տեսնել, որ 39 ապրանքախմբի մեջ կան մի քանի ապրանքախմբեր (դեղին գույնով ընդգծված), որոնց ԱՄՀԳ-ն 2021 կամ 2022 թվականից է գերազանցում 1 արժեքը: Այդ ապրանքախմբերի մեծ մասը, ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՌԴ-ի դեմ պատժամիջոցներով պայմանավորված, գրեթե ամբողջությամբ ներմուծվում և վերաարտահանվում է ՌԴ:

Քանի որ հետազոտության համար հետաքրքրություն էին ներկայացնում այն ապրանքախմբերը, որոնց գծով երկիրը միանշանակ ունի միջազգային մասնագիտացման մակարդակ (այսինքն՝ ԱՄՀԳ > 1 և Մգ > 0), կամ տվյալ ապրանքախմբի արտահանման ծավալները համաշխարհային շուկայում ցուցանիշի իմաստով էական են (ԱՄՀԳ > 1 և Մգ < 0), վերլուծության համար դիտարկվել է միայն ՀՀ-ի այս 39 ապրանքախմբի Մգ-ն, քանի որ մնացած ապրանքախմբերի դեպքում ԱՄՀԳ-ն չի գերազանցում 1 արժեքը՝ անկախ Մգ-ի արժեքից (աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ում դիտարկվող 39 ապրանքախմբերը կարող ենք դասակարգել հետևյալ խմբերում.

1. Ապրանքախմբեր, որոնց գծով ՀՀ-ն, անկասկած, ունի միջազգային մասնագիտացման մակարդակ, քանի որ դիտարկվող ողջ ժամանակահատվածում ԱՄՀԳ > 1, իսկ Մգ > 0 (14 ապրանքախմբեր՝ աղյուսակի 2-ի 283–351 Դասակարգիչներով տողերն ընդգծված են կանաչ գույնով):
2. Ապրանքախմբեր, որոնց գծով, բացառությամբ որոշ տարիների, ՀՀ-ն ունի միջազգային մասնագիտացման մակարդակ (6 ապրանքախմբեր՝ աղյուսակի 2-ի 277–846 Դասակարգիչներով տողերը՝ կրկին ընդգծված են կանաչ գույնով): Այս ապրանքախմբերի մասնագիտացման ցուցանիշները որոշ տարիների ցածր են եղել անհրաժեշտ ցուցանիշից:
3. Ապրանքախմբեր, որոնց գծով հիմնականում ԱՄՀԳ > 1, սակայն Մգ < 0 (11 ապրանքախմբեր՝ աղյուսակի 2-ի 684–292 Դասակարգիչներով տողերն ընդգծված են դեղին գույնով): Այս ապրանքախմբերի գծով ՀՀ-ն ցուցանիշի իմաստով էական կշիռ ունի համաշխարհային շուկայում, սակայն համարվում է տվյալ ապրանքախմբերը ներմուծող երկիր, ինչը նշանակում է, որ տեղական սպառողների համար որոշակի ճիշտ մշակված քաղաքականության միջոցով կա հնարավորություն այս ապրանքախմբերի գծով նույնպես միանշանակ ունենալու միջազգային մասնագիտացման մակարդակ: Ընդ որում, այս 11 ապրանքախմբերից 2-ի դեպքում որոշակի տարիների 2 ցուցանիշներն էլ բավարարել են անհրաժեշտ սահմանաչափը (աղյուսակի 2-ի Դասակարգչի 684 և 111 ապրանքախմբերը. տվյալ տարիներն ընդգծված են կանաչ գույնով): Բացի դրանից, այս 11 ապրանքախմբերից 4-ի դեպքում էլ որոշակի տարիների 2 ցուցանիշներն էլ ցածր են եղել անհրաժեշտ սահմանաչափից (աղյուսակի 2-ի 073–292 Դասակարգիչներով տողերն ընդգծված են կարմիր գույնով):

## Աղյուսակ 2

***ՀՀ-ից արտահանվող 39 ապրանքախմբի ԱՄՀԳ և Մգ գործակիցները (2015–2022 թթ.)[21]***

| ՄԱՍԴ (SITC) 3-նիշ | 2015 | | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | | 2021 | | 2022 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԱՄՀԳ | Մգ | ԱՄՀԳ | Մգ | ԱՄՀԳ | Մգ | ԱՄՀԳ | Մգ | ԱՄՀԳ | Մգ | ԱՄՀԳ | Մգ | ԱՄՀԳ | Մգ | ԱՄՀԳ | Մգ |
| **283** | 79.25 | 100% | 81.63 | 100% | 85.04 | 100% | 74.61 | 100% | 86.98 | 100% | 83.36 | 100% | 70.65 | 100% | 55.42 | 100% |
| **122** | 62.70 | 60% | 54.27 | 67% | 55.50 | 70% | 51.87 | 66% | 47.52 | 67% | 43.58 | 59% | 42.92 | 62% | 48.70 | 73% |
| **671** | 25.29 | 82% | 21.76 | 80% | 21.12 | 87% | 30.72 | 91% | 30.35 | 93% | 18.95 | 90% | 24.76 | 90% | 24.34 | 92% |
| **289** | 26.10 | 100% | 19.80 | 100% | 6.19 | 100% | 8.10 | 100% | 34.61 | 100% | 9.68 | 99% | 3.34 | 100% | 22.20 | 100% |
| **287** | 7.61 | 96% | 2.55 | 96% | 4.91 | 93% | 5.57 | 88% | 5.33 | 91% | 23.23 | 96% | 23.77 | 98% | 20.49 | 98% |
| **112** | 15.11 | 47% | 17.86 | 52% | 21.21 | 64% | 18.39 | 75% | 20.62 | 74% | 16.94 | 79% | 18.18 | 71% | 15.19 | 78% |
| **058** | 4.40 | 68% | 3.72 | 50% | 3.63 | 73% | 3.58 | 73% | 2.98 | 72% | 2.86 | 47% | 3.31 | 47% | 5.15 | 65% |
| **841** | 5.40 | 38% | 6.13 | 43% | 6.83 | 38% | 8.91 | 41% | 5.83 | 43% | 5.15 | 34% | 6.32 | 36% | 5.15 | 43% |
| **034** | 1.88 | 58% | 1.25 | 65% | 1.98 | 70% | 2.35 | 75% | 2.52 | 74% | 4.68 | 88% | 5.08 | 75% | 4.91 | 70% |
| **842** | 3.65 | 21% | 3.39 | 15% | 4.04 | 21% | 6.27 | 29% | 5.40 | 36% | 5.57 | 35% | 5.88 | 36% | 4.12 | 33% |
| **897** | 1.26 | 55% | 3.50 | 76% | 1.33 | 44% | 1.88 | 41% | 1.72 | 42% | 1.73 | 12% | 3.55 | 52% | 3.45 | 55% |
| **054** | 2.01 | 4% | 2.95 | 43% | 1.93 | 34% | 3.07 | 38% | 3.30 | 37% | 3.08 | 26% | 4.38 | 37% | 3.37 | 22% |
| **971** | 3.32 | 64% | 3.24 | 74% | 3.27 | 44% | 4.26 | 33% | 4.72 | 34% | 3.65 | 80% | 1.94 | 14% | 2.92 | 16% |
| **351** | 19.08 | 75% | 12.36 | 51% | 12.61 | 55% | 11.63 | 73% | 7.99 | 52% | 8.96 | 45% | 4.00 | 38% | 2.72 | 84% |
| **277** | 2.18 | 16% | 1.69 | 15% | 2.41 | 28% | 1.41 | -45% | 0.36 | -49% | 7.63 | 81% | 23.35 | 96% | 17.52 | 87% |
| **212** | 1.51 | 100% | 2.58 | 100% | 0.01 | 100% | 1.69 | 100% | 0.20 | 93% | 0.00 | 0% | 0.13 | 93% | 1.46 | 100% |
| **024** | 8.01 | 62% | 3.63 | 44% | 2.78 | 32% | 1.82 | 12% | 1.28 | -2% | 1.91 | 16% | 2.46 | 24% | 1.46 | 3% |
| **278** | 1.54 | -18% | 2.11 | -2% | 2.09 | 11% | 2.18 | 12% | 3.08 | 40% | 2.42 | 28% | 2.20 | 27% | 1.16 | 29% |

[21] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ապրանքների արտաքին առևտրի վերաբերյալ ներկայացվող տվյալներն ըստ երկրների, https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

*Աղյուսակ 2-ի շարունակություն*

| ՄԱՍԴ (SITC) 3-նիշ | 2015 | | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | | 2021 | | 2022 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԱՄՀԳ | ՄԳ | ԱՄՀԳ | ՄԳ | ԱՄՀԳ | ՄԳ | ԱՄՀԳ | ՄԳ | ԱՄՀԳ | ՄԳ | ԱՄՀԳ | ՄԳ | ԱՄՀԳ | ՄԳ | ԱՄՀԳ | ՄԳ |
| **001** | 2.07 | -9% | 0.92 | -32% | 2.26 | -1% | 0.71 | -51% | 1.97 | 3% | 4.03 | 31% | 6.84 | 51% | 4.47 | 62% |
| **846** | 0.37 | -64% | 1.19 | -27% | 2.13 | -14% | 2.87 | 7% | 2.87 | 23% | 2.78 | 18% | 3.80 | 16% | 1.87 | 4% |
| **684** | 7.34 | 4% | 5.33 | 4% | 5.35 | 2% | 3.95 | -7% | 3.67 | -17% | 4.44 | -6% | 4.08 | 0% | 3.06 | -1% |
| **667** | 5.24 | -11% | 5.62 | -12% | 4.74 | -18% | 4.38 | -36% | 3.72 | -40% | 5.42 | -20% | 5.14 | -15% | 10.21 | -10% |
| **111** | 4.04 | -3% | 3.56 | 1% | 3.34 | -10% | 2.86 | -11% | 2.81 | -20% | 2.87 | -8% | 3.82 | 5% | 3.06 | -10% |
| **056** | 1.99 | -24% | 1.82 | -11% | 2.25 | -10% | 2.40 | -7% | 2.03 | -19% | 2.76 | -9% | 3.55 | -1% | 2.61 | -13% |
| **665** | 2.76 | -47% | 1.97 | -53% | 2.46 | -51% | 3.12 | -43% | 2.13 | -58% | 2.69 | -52% | 2.82 | -48% | 2.51 | -44% |
| **057** | 1.25 | -40% | 2.31 | -1% | 1.02 | -44% | 1.60 | -38% | 1.60 | -38% | 2.61 | -20% | 2.65 | -25% | 1.98 | -25% |
| **583** | 1.31 | -69% | 1.28 | -50% | 1.40 | -47% | 1.61 | -38% | 1.33 | -39% | 1.40 | -32% | 1.35 | -26% | 1.17 | -12% |
| **073** | 0.60 | -93% | 0.93 | -85% | 2.72 | -61% | 3.90 | -50% | 3.75 | -46% | 2.51 | -58% | 2.76 | -58% | 2.64 | -52% |
| **059** | 1.66 | -15% | 0.96 | -16% | 1.00 | -25% | 1.14 | -31% | 0.98 | -40% | 1.25 | -30% | 2.28 | -2% | 1.40 | -7% |
| **845** | 0.39 | -61% | 0.73 | -46% | 1.19 | -33% | 1.74 | -31% | 1.04 | -48% | 1.06 | -40% | 1.49 | -11% | 1.31 | -5% |
| **292** | 1.24 | -52% | 1.31 | -27% | 1.77 | -11% | 1.38 | -37% | 1.02 | -61% | 0.95 | -50% | 0.89 | -62% | 1.18 | -48% |
| **685** | 0.02 | -97% | 0.16 | -62% | 0.10 | -70% | 0.05 | -87% | 0.08 | -72% | 0.00 | -100% | 1.60 | 86% | 2.10 | 96% |
| **672** | 0.00 | -100% | 0.00 | -100% | 0.00 | -100% | 0.00 | -100% | 0.00 | -99% | 0.49 | -6% | 1.18 | 66% | 1.17 | 84% |
| **023** | 0.11 | -99% | 0.01 | -100% | 0.06 | -99% | 0.14 | -98% | 0.32 | -95% | 0.15 | -98% | 0.36 | -92% | 3.51 | -38% |
| **761** | 0.03 | -96% | 0.01 | -99% | 0.00 | -100% | 0.00 | -100% | 0.00 | -100% | 0.01 | -99% | 0.00 | -100% | 2.39 | -40% |
| **071** | 1.43 | -71% | 0.88 | -77% | 0.74 | -77% | 0.85 | -76% | 0.77 | -75% | 0.84 | -73% | 0.86 | -79% | 1.56 | -48% |
| **091** | 0.03 | -100% | 0.00 | -100% | 0.01 | -100% | 0.02 | -100% | 0.01 | -100% | 0.03 | -100% | 0.00 | -100% | 1.47 | -88% |
| **633** | 0.01 | -100% | 0.01 | -100% | 0.37 | -96% | 0.20 | -98% | 0.22 | -98% | 0.01 | -100% | 0.08 | -99% | 1.37 | -85% |
| **629** | 0.02 | -98% | 0.03 | -97% | 0.10 | -94% | 0.21 | -83% | 0.21 | -86% | 0.47 | -75% | 0.66 | -66% | 1.15 | -41% |

4. Ապրանքախմբեր, որոնց գծով մասնագիտացման գործակիցները գրեթե միշտ ցածր են եղել անհրաժեշտ սահմանաչափից, սակայն 2021–2022 թվականներին ունեցել են մասնագիտացման գործակիցների բավարար մակարդակ (8 ապրանքախմբեր՝ աղյուսակ 2-ի 685–629 Դասակարգիչներով տողերն ընդգծված են կարմիր գույնով): Սրանք հիմնականում այն ապրանքախմբերն են, որոնք ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՌԴ-ի դեմ պատժամիջոցներով պայմանավորված, գրեթե ամբողջությամբ ներմուծվում և վերաարտահանվում են ՌԴ: Վերաարտահանման մասին է վկայում այն փաստը, որ մինչև 2021 թ. ՀՀ-ն այդ ապրանքախմբերը գրեթե չի արտահանել, այլ հիմնականում ներմուծել է, քանի որ Մգ-ն բացասական է և գրեթե մոտ է կամ հենց -100 արժեքն ունի, իսկ ԱՄՀԳ-ն հիմնականում մոտ է 0 արժեքին: Այս 8 ապրանքախմբերից միայն 2-ի դեպքում է 2021–2022 թվականներին Մգ-ն դրական (իսկ ԱՄՀԳ > 1), իսկ մնացած 6-ի պարագայում միայն 2022 թ. է ԱՄՀԳ > 1, իսկ Մգ-ն շարունակում է բացասական լինել:

Այնուհետև ԵԱՏՄ անդամ մյուս երկրների համար հաշվարկվել է ՀՀ-ից արտահանվող վերոնշյալ 39 ապրանքախմբի գծով ԱՄՀԳ-ն՝ բացահայտելու այդ երկրների մրցակցային առավելությունները նշված ապրանքախմբերում: Վերլուծության արդյունքներն արտացոլվել են աղյուսակ 3-ում:

Ամփոփելով աղյուսակ 3-ում ներկայացված վերլուծությունը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

- 39 ապրանքախմբից 2-ի դեպքում մրցակցային առավելություններ ունեն ԵԱՏՄ բոլոր երկրները, այսինքն՝ այս ապրանքախմբերի գծով ԵԱՏՄ անդամ երկրները մրցակիցներ են, և փոխադարձ առևտուրը միմյանց միջև գրեթե անհնար է:
- 39 ապրանքախմբից 4-ի դեպքում ԵԱՏՄ 5 անդամ երկրներից 4-ն ունեն մրցակցային առավելություններ, և եթե հաշվի առնենք, որ ՌԴ-ն, լինելով ԵԱՏՄ առաջատար երկիր, այդ 4 ապրանքախմբի գծով ունի մրցակցային առավելություն, ապա դեպի մրցակցային առավելություն չունեցող երկրներ այս ապրանքախմբերի արտահանումը նույնպես գրեթե անհնար է:
- 39 ապրանքախմբից 11-ի դեպքում ԵԱՏՄ 5 անդամ երկրներից 3-ն ունեն մրցակցային առավելություն, ընդ որում, 11 ապրանքախմբից 6-ի գծով ևս ՌԴ-ն ունի մրցակցային առավելություն:
- 39 ապրանքախմբից 13-ի դեպքում, բացի ՀՀ-ից, մրցակցային առավելություն ունի ԵԱՏՄ անդամ միայն 1 երկիր: Ընդ որում, 13 ապրանքախմբից այս դեպքում ՌԴ-ն մրցակցային առավելություններ ունի միայն 3-ի գծով:
- 39 ապրանքախմբից միայն 9 ապրանքախմբի գծով մրցակցային առավելություն ունի բացառապես ՀՀ-ն: Ընդ որում, այդ 9 ապրանքախմբից միայն 3-ի դեպքում ՀՀ-ն ունի մասնագիտացման 2 ցուցանիշների բարձր արժեքներ (աղյուսակ 3-ում ընդգծված են կանաչ գույնով): Եվս 3 ապրանքախմբի գծով ՀՀ-ն վերապահումով ունի մրցակցային առավելություններ (աղյուսակ 3-ում ընդգծված են դեղին գույնով), իսկ մնացած 3-ն այն ապրանքախմբերն են, որոնք, պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՌԴ-ի դեմ պատժամիջոցներով, հիմնականում վերաարտահանվում են:

**Աղյուսակ 3**

***ԵԱՏՄ անդամ մյուս երկրների՝ ՀՀ-ից արտահանվող 39 ապրանքախմբի ԱՄՀԳ ցուցանիշները[22]***

| ՄԱՍԴ (SITC) 3-նիշ | Բելառուս | Ղազախստան | Ղրղզստան | ՌԴ |
|---|---|---|---|---|
| 289 | + | + | + | + |
| 685 | + | + | + | + |
| 287 | | + | + | + |
| 212 | + | | + | + |
| 672 | + | + | | + |
| 278 | + | + | | + |
| 122 | | + | + | |
| 671 | | + | | + |
| 023 | + | | + | |
| 054 | + | | + | |
| 684 | | + | | + |
| 971 | | | + | + |
| 351 | + | | | + |
| 073 | + | | | + |
| 846 | + | | + | |
| 091 | | + | | + |
| 024 | + | | + | |
| 283 | | + | | |
| 277 | | | | + |
| 667 | | | | + |
| 058 | + | | | |
| 034 | | | | + |
| 001 | | | + | |
| 842 | | | + | |
| 111 | | | + | |
| 057 | | | + | |
| 583 | + | | | |
| 056 | + | | | |
| 761 | + | | | |
| 292 | + | | | |
| 112 | | | | |
| 841 | | | | |
| 897 | | | | |
| 665 | | | | |
| 059 | | | | |
| 845 | | | | |
| 071 | | | | |
| 633 | | | | |
| 629 | | | | |

Վերլուծությունն ամփոփելու համար վերջում հաշվարկվել են ԵԱՏՄ անդամ երկրների (բացի ՀՀ-ից) վերոնշյալ 39 ապրանքախմբի ներմուծման մեջ ՀՀ-ից և ԵԱՏՄ մյուս երկրներից (բացի ՀՀ-ից) ներմուծման տեսակարար կշիռները (աղյուսակ 4):

[22] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ապրանքների արտաքին առևտրի վերաբերյալ ներկայացվող տվյալներն ըստ երկրների, https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

**Աղյուսակ 4**

***ԵԱՏՄ անդամ երկրների 39 ապրանքախմբի ներմուծման մեջ ՀՀ-ից և ԵԱՏՄ մյուս երկրներից (բացի ՀՀ-ից) ներմուծման տեսակարար կշիռները 2022 թ. (%)[23]***

| ՄԱՍԴ (SITC) 3-նիշ | Բելառուս | | Ղազախստան | | Ղրղզստան | | ՌԴ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ-ից | ԵԱՏՄ-ից | ՀՀ-ից | ԵԱՏՄ-ից | ՀՀ-ից | ԵԱՏՄ-ից | ՀՀ-ից | ԵԱՏՄ-ից |
| **289** | - | 93 | 0 | 99 | - | 100 | 3 | 63 |
| **685** | 49 | 1 | - | - | - | - | - | 5 |
| **287** | - | 14 | - | 36 | - | 0 | 3 | 48 |
| **212** | - | 25 | - | - | - | 100 | 0 | 52 |
| **672** | - | - | - | 0 | - | - | 0 | 0 |
| **278** | 1 | 77 | 0 | 74 | - | 92 | 2 | 27 |
| **122** | - | 70 | 0 | 93 | 0 | 64 | 5 | 2 |
| **671** | 2 | 3 | - | 0 | - | 68 | 6 | - |
| **023** | - | 99 | - | 66 | - | 95 | 1 | 78 |
| **054** | 1 | 16 | 0 | 13 | - | 52 | 3 | 14 |
| **684** | 0 | 1 | - | - | - | 1 | - | 0 |
| **971** | - | - | - | - | - | - | - | - |
| **351** | - | 58 | - | 100 | - | 100 | - | 48 |
| **073** | 1 | 78 | 0 | 74 | 0 | 86 | 2 | 14 |
| **846** | 1 | 0 | 0 | - | - | - | - | - |
| **091** | - | 88 | 0 | 84 | - | 88 | 2 | 5 |
| **024** | - | 64 | - | 74 | - | 80 | 1 | 89 |
| **283** | - | 100 | - | 38 | - | - | 1 | 19 |
| **277** | 0 | 18 | - | 43 | - | 60 | 44 | 0 |
| **667** | 3 | - | 5 | 0 | - | 0 | 51 | 0 |
| **058** | 1 | 30 | 0 | 77 | - | 49 | 2 | 12 |
| **034** | 0 | 22 | 0 | 20 | - | 60 | 6 | 3 |
| **001** | - | 17 | 0 | 21 | - | 85 | 0 | 3 |
| **842** | 0 | 0 | 0 | - | - | - | - | - |
| **111** | 0 | 65 | 0 | 73 | - | 88 | 4 | 14 |
| **057** | 0 | 8 | 0 | 4 | 0 | 8 | 1 | 3 |
| **583** | - | 58 | 0 | 81 | - | 37 | 0 | 23 |
| **056** | 1 | 61 | 0 | 61 | - | 66 | 2 | 9 |
| **761** | 0 | 0 | 0 | - | - | 0 | - | - |
| **292** | 0 | 6 | 0 | 12 | - | 25 | 1 | 10 |
| **112** | 21 | 13 | 2 | 38 | 0 | 44 | 11 | 3 |
| **841** | 0 | 0 | 0 | - | - | - | - | - |
| **897** | 5 | 0 | 2 | - | - | - | - | - |
| **665** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 46 | 0 | 0 |
| **059** | 0 | 59 | 0 | 42 | - | 75 | 2 | 4 |
| **845** | 0 | 0 | 0 | - | - | - | - | - |
| **071** | 0 | 75 | 0 | 63 | - | 96 | 1 | 1 |
| **633** | 0 | 14 | 0 | 24 | - | 17 | 1 | 1 |
| **629** | 0 | 39 | 0 | 25 | - | 27 | 1 | 7 |

Աղյուսակ 4-ում 0%-ները նշանակում են, որ ներմուծման ծավալներն աննշան են՝ գրեթե մոտ 0%-ին:

[23] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) կողմից ապրանքների արտաքին առևտրի վերաբերյալ ներկայացվող տվյալներն ըստ երկրների, https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/US.TradeMatrix

Ըստ աղյուսակ 4-ի՝ Ղազախստանն ու Ղրղզստանը նշված 39 ապրանքախմբերը ՀՀ-ից գրեթե չեն ներմուծում: Պատկերը գրեթե նույնն է նաև Բելառուսի հետ առևտրային հարաբերություններում: 39 ապրանքախմբերից միայն 685 և 112 Դասակարգիչներով ապրանքախմբերն են Բելառուսի ներմուծման կառուցվածքում 2022 թ. էական կշիռ կազմում, սակայն այդ 2 ապրանքախմբերն էլ նման ցուցանիշ արձանագրել են հենց միայն 2022 թ., իսկ նախորդող տարիներին այդ ցուցանիշներն էական չեն եղել:

Ինչ վերաբերում է ՌԴ ներմուծման կառուցվածքում 39 ապրանքախմբերի տեսակարար կշռին, ապա 277, 667 և 112 Դասակարգիչներով ապրանքախմբերից 277 Դասակարգչով ապրանքախումբը ՀՀ-ից ՌԴ ներմուծվում է միայն 2020 թվականից, 667 Դասակարգչով ապրանքախմբի ՀՀ-ից ներմուծման կշիռը ՌԴ ներմուծման մեջ նախորդ տարիներին տատանվել է 14-30%-ի սահմաններում, իսկ 112 Դասակարգչով ապրանքախումբը 9-11% կշռով ունեցել է իր կայուն տեղը ՌԴ ներմուծման մեջ:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամ երկրներից (բացի ՀՀ-ից) ներմուծման կշիռներին, ապա Բելառուսի և Ղազախստանի հիմնական մատակարար երկիր եղել է ՌԴ-ն, իսկ Ղրղզստանի դեպքում՝ հիմնականում Ղազախստանը, սակայն փոքր չեն նաև ՌԴ-ից ներմուծվող ապրանքախմբերի տեսակարար կշիռները: ՌԴ-ի համար հիմնական մատակարար երկրներ են եղել Բելառուսը և Ղազախստանը:

Այսպիսով՝ ըստ աղյուսակ 4-ի կարող ենք փաստել, որ վերոնշյալ 39 ապրանքախմբերը, որոնց գծով ՀՀ-ն այս կամ այն չափով ունի մրցակցային առավելություններ, հիմնականում չեն արտահանվում ԵԱՏՄ անդամ երկրներ: **Ավելին՝ նույնիսկ այն ապրանքախմբերը (աղյուսակ 4-ի վերջին 9 ապրանքախմբերը, որոնք ընդգծված են կանաչ, դեղին և կարմիր գույներով), որոնց գծով ԵԱՏՄ մյուս բոլոր երկրները չունեին մրցակցային առավելություններ (աղյուսակ 3), ոչ միայն ՀՀ-ից ԵԱՏՄ անդամ մյուս երկրներ գրեթե չեն արտահանվում (բացառությամբ դեպի ՌԴ արտահանվող 112 Դասակարգչով ապրանքախմբից), այլ նաև ԵԱՏՄ անդամ մյուս երկրների միջև իրականացվում է այդ ապրանքախմբերի մեծ մասի ակտիվ փոխադարձ առևտուր:**

**Եզրակացություններ:** Իրականացված վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

– ՀՀ-ն ունի 39 ապրանքախմբի արտահանման միջազգային մասնագիտացման մակարդակ, որից 20-ի գծով դիտարկվող մասնագիտացման ցուցանիշները գրեթե միշտ եղել են սահմանաչափից բարձր (աղյուսակ 2՝ կանաչ գույնով ընդգծված):

– 11 ապրանքախմբի գծով ՀՀ-ն հիմնականում հանդիսանում է արտահանող երկիր, սակայն փոքր չեն նաև ներմուծման ծավալները, ինչը ենթադրում է, որ ճիշտ մշակված քաղաքականությունը կարող է հանգեցնել ինչպես ներմուծման ծավալների կրճատմանն ու ներմուծման փոխարինմանը, այնպես էլ արտահանման միջազգային մասնագիտացման մակարդակի բարձրացմանը (աղյուսակ 2՝ դեղին գույնով ընդգծված):

– 8 ապրանքախմբի գծով ՀՀ-ն մասնագիտացման որոշակի մակարդակ ձեռք է բերել վերջին տարիներին՝ հիմնականում պայմանավորված ռուս-

ուկրաինական պատերազմի հետևանքով ՌԴ-ի դեմ պատժամիջոցներով. դրանք գրեթե ամբողջությամբ ներմուծվում և վերաարտահանվում են ՌԴ: Հետևաբար՝ այս ապրանքախմբերի գծով մասնագիտացման մակարդակի պահպանումը գրեթե անհնար է (Մգ-ն բացասական է և գրեթե մոտ է կամ հենց -100 արժեքն ունի), չնայած որոշ ապրանքախմբերի դեպքում (օրինակ՝ 091 (մարգարին և համակցված ճարպեր) և 023 (կարագ և կաթից ստացված այլ ճարպեր և յուղեր) Դասակարգիչներով), պահպանելով ռուսական շուկան, հնարավոր է ապահովել միջազգային մասնագիտացման մակարդակ (աղյուսակ 2՝ կարմիր գույնով ընդգծված):

– 39 ապրանքախմբից միայն 9-ի դեպքում ԵԱՏՄ անդամ երկրներից միայն ՀՀ-ն ունի միջազգային մասնագիտացման մակարդակ, որոնք, սակայն, ՀՀ-ից ԵԱՏՄ անդամ երկրներ չեն արտահանվում (բացառությամբ ՌԴ արտահանվող 112 Դասակարգչով ապրանքախմբից), մինչդեռ դրանց մեծ մասի դեպքում ԵԱՏՄ մնացած երկրներն ունեն փոխադարձ առևտրաշրջանառություն (աղյուսակ 3՝ վերջին 9 ապրանքախումբը):

– Նախորդ կետում նշված 9 ապրանքախմբից 6-ի դեպքում իրատեսական է մտածել ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանման հնարավորությունների մասին (աղյուսակ 3՝ կանաչ և դեղին գույնով ընդգծված), իսկ մյուս 3-ն այն 8 ապրանքախմբից են, որոնք գրեթե ամբողջությամբ ներմուծվում և վերաարտահանվում են ՌԴ՝ հիմնականում պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՌԴ-ի դեմ պատժամիջոցներով:

– 39 ապրանքախմբից միայն 2-ի դեպքում միջազգային մասնագիտացման մակարդակ ունեն ԵԱՏՄ անդամ բոլոր երկրները, իսկ 28 ապրանքախմբի դեպքում ԵԱՏՄ անդամ երկրների շարքում կան երկրներ, որոնք չունեն միջազգային մասնագիտացման մակարդակ, այսինքն՝ կարելի է ուսումնասիրել այդ ապրանքախմբերի արտահանման հնարավորությունները դեպի ԵԱՏՄ՝ հաշվի առնելով որոշակի ապրանքախմբի առանձնահատկությունները: Օրինակ՝ 351 Դասակարգչով ապրանքախմբի դեպքում (էլեկտրաէներգիա) միջազգային մասնագիտացման մակարդակ ունեն միայն ՀՀ-ն ու ՌԴ-ն, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն ԵԱՏՄ անդամ ոչ մի երկրի հետ չունի ընդհանուր սահման, նպատակահարմար չէ դիտարկել այդ ապրանքախմբի արտահանման հնարավորությունները: Ավելին՝ Ղազախստանը, ներմուծելով էլեկտրաէներգիա ՌԴ-ից, Ղրղզստան ներմուծված էլեկտրաէներգիայի միակ մատակարարն է՝ չունենալով միջազգային մասնագիտացման մակարդակ այդ ապրանքախմբի գծով:

Այսպիսով՝ 39 ապրանքախմբից, որոնց գծով ՀՀ-ն ունի արտահանման միջազգային մասնագիտացման մակարդակ, 33 ապրանքախմբի (աղյուսակ 2՝ կանաչ գույնով ընդգծված 20 ապրանքախումբ, դեղին գույնով ընդգծված 11 ապրանքախումբ և կարմիր գույնով ընդգծված 8 ապրանքախմբից 2-ը (091 (մարգարին և համակցված ճարպեր) և 023 (կարագ և կաթից ստացված այլ ճարպեր և յուղեր) Դասակարգիչներով)) գծով ՀՀ-ն ունի արտահանման ընդլայնման հնարավորություն:

Ամփոփելով կատարված վերլուծությունն ու ներկայացված եզրահանգումները՝ կարող ենք փաստել, որ ՀՀ-ն առևտրային հարաբերություններում չի իրացրել ԵԱՏՄ-ին անդամակցության իր հնարավորությունները, և առկա են դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանման ընդլայնման հեռանկարներ:

## Օգտագործված գրականություն


1. Թավադյան Ա., Ինտեգրացիոն գործընթացների իրական հնարավորությունները, «21-րդ ԴԱՐ», թիվ 5 (57), հուլիս, 2014, էջ 5–25:
2. Գևորգյան Գ., ՀՀ տնտեսական ինքնիշխանության հիմնահարցերը՝ արտաքին տնտեսական հարաբերությունների համապատկերում, «Բանբեր ՀՊՏՀ», 3, 2022, էջ 112-130:
3. Միջազգային տնտեսագիտություն, ուսումն. ձեռնարկ/ Դ. Գալոյանի և Զ. Թադևոսյանի խմբ./, Եր., 2018:
4. Абрамов В. Л., Жигун Л. А., Оценка перспектив взаимной торговли стран ЕАЭС с использованием сценарного подхода, Журнал «Современная наука: актуальные проблемы теории и практики», Серия: «Экономика и право», №4, апрель, 2020, с. 7-9.
5. Айрапетян В.Л., Роль «малых» участников ЕАЭС во внешней торговле Армении, Научный результат. «Экономические исследования». Т.3, №4, 2017, с. 3-9.
6. Гринберг Р. С., Пылин А. Г., Евразийский экономический союз. Основные тренды развития на фоне глобальной неопределенности, «Экономика региона», 2020, т. 16, вып. 2, с. 340-351.
7. Зиядуллаев Н.С., ЕАЭС: между политикой и экономикой, «Проблемы теории и практики управления», № 11, 2014. с. 25-37.
8. Саргсян Л. Н., Возможности расширения внутрирегионального экспорта для каждой страны ЕАЭС, Международный центр научного сотрудничества «Наука и просвещение», «Экономика, бизнес и право в новых условиях», сборник статей Международной научно-практической конференции. Пенза, 2019, с. 47-51.
9. Саргсян Л. Н., Экспорт Армении и возможности его расширения в рамках ЕАЭС, МІЖНАРОДНИЙ НАУКОВИЙ ЖУРНАЛ «ІНТЕРНАУКА». Серія: «Економічні науки», № 10 (18)/2018, Київ 2018, с. 78-81.
10. Маркаров А. А., Давтян В. С., Интеграция Армении в общий электроэнергетический рынок ЕАЭС: риски и возможности, «Геоэкономика энергетики», № 2 (14), 2021, с. 124–138.
11. Konrad Adenauer Stiftung (KAS) report, 2020, «Armenia's precarious balance: The European Union (EU) and The Eurasian Economic Union (EAEU)».
12. Abramov V. L., Ogloblina E. V., Abanina I. N., Lapenkova N. V., Assessment of Integration Effects in Mutual Trade of the EAEU Countries, Proceedings of the External Challenges and Risks for Russia in the Context of the World Community's Transition to Polycentrism: Economics, Finance and Business (ICEFB 2019), Advances in Economics, Business and Management Research, volume 107.

**АРА МКРТЧЯН**
*Заведующий кафедрой международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук, доцент*

***Возможности расширения экспорта РА в рамках ЕАЭС.–*** Принятие мер по развитию экспорта является одним из важнейших вопросов, стоящих перед любой страной. Рост объемов экспорта и освоение новых рынков позволяют странам получать практически неограниченный спрос внешнего рынка в дополнение к ограниченному спросу внутреннего рынка, что особенно важно в случае стран с небольшой экономикой. Армения, вступив в ЕАЭС, получила определенные возможности для продвижения экспорта в страны-члены ЕАЭС. В статье проанализирована внешняя торговля РА с целью выявления основных групп товаров, по которым РА имеет уровень международной специализации. Для выявления возможностей расширения экспорта РА в рамках ЕАЭС необходимо также рассчитать показатели международной специализации экспорта других стран-членов ЕАЭС, особенно для тех групп товаров, по которым РА имеет уровень международной специализации, что дает возможность увидеть, какие из стран-членов ЕАЭС являются странами-конкурентами РА по экспорту данных групп товаров. В статье также рассчитаны относительные веса РА и других стран ЕАЭС (кроме РА) в структуре импорта вышеуказанных товарных групп государств-членов ЕАЭС, в результате чего возможности расширения экспорта РА в контексте ЕАЭС могут быть определены.

**Ключевые слова:** *РА, ЕАЭС, возможности расширения экспорта, специализация экспорта, Международная стандартная торговая классификация (МСТК), товарная номенклатура внешнеэкономической деятельности (ТН ВЭД), международная торговля*
JEL: F01, F13
DOI: 10.52174/29538114_2024.1-128

**ARA MKRTCHYAN**
*Head of the International Economic Relations Chair ASUE, PhD in Economics, Associate Professor*

***Opportunities for expansion of RA exports within the EAEU framework.–*** Taking measures to develop exports is one of the most important issues facing any country. Growing exports and expanding into new markets allows countries to tap into almost unlimited foreign market demand to complement limited domestic market demand, which is especially important for countries with small economies. Armenia, having joined the EAEU,

received certain opportunities to promote exports to the EAEU member countries. The article analyzes the foreign trade of the Republic of Armenia in order to identify the main groups of goods for which the Republic of Armenia has a level of international specialization. To identify opportunities for expanding RA exports within the EAEU, it is also necessary to calculate indicators of international specialization of exports of other EAEU member countries, especially for those groups of goods for which RA has a level of international specialization, which makes it possible to see which of the EAEU member countries are competitors of the Republic of Armenia in the export of these groups of goods. The article also calculates the relative weights of the Republic of Armenia and other EAEU countries (except for the Republic of Armenia) in the import structure of the above commodity groups of the EAEU member states, as a result of which the possibilities for expanding exports of the Republic of Armenia in the context of the EAEU can be determined.

**Keywords:** *RA, EAEU, opportunities for expansion of exports, export specialization, Standard International Trade Classification (SITC), Foreign Economic Activity Commodity Nomenclature (FEACN), international trade*
JEL: F01, F13
DOI: 10.52174/29538114_2024.1-128